Զբոսաշրջության ոլորտը՝ որպես տնտեսական զարգացման բաղադրիչ Վաղարշապատ միավորված համայնքի օրինակով

Զեկույց

Արմավիր 2023



Ուսումնասիրությունն իրականացվել է ԱՄՆ դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Երիտասարդների քաղաքացիական մասնակցության և սոցիալական պատասխանատվության խթանումը համայնքներում» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն է նպաստել համայնքներում երիտասարդների քաղաքացիական մասնակցությանը՝ իկորացնելով նրանց հետապոտական և վերահսկողական կարողությունները: Ծրագիրն իրականացվում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և իր գործընկերների՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «ՄԻՏՔ» ՀԿ-ների կողմից:

Հեղինակներ՝
Հետազոտության ղեկավար՝ Լևոն Չուկակյան
Ավագ հետազոտող՝ Ելենա Հարությունյան
Հետազոտական խմբի անդամներ՝ Ստյոպա Ասրյան, Ժաննա Հարությունյան, Գեղամ Հայրապետյան, Շուշան Արսենյան

Սույն զեկույցը հրապարակվել է ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «ՄԻՏՔ» ՀԿ-ն, և այն չի արտացոլում ԱՄՆ դեսպանատան տեսակետները:

Բովանդակություն

Բովանդակություն 3
Ամփոփագիր 4
Հապավումների ցանկ 6
Ներածություն 7
Հետազոտության մեթոդաբանություն 7
Գլուխ 1. Զբոսաշրջության զարգացումը Վաղարշապատ համայնքում. Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի 2019-2023թթ հնգամյա զարգացման ծրագրի, ֆեյսբուքյան պաշտոնական էջի և պաշտոնական համացանցային կայքի ուսումնասիրության արդյունքների ներկայացում 9
1.1.Վաղարշապատ համայնքի 2019-2023թթ հնգամյա զարգացման ծրագրի, համայնքին առնչվող պետական այլ ռազմավարությունների ուսումնասիրություն 9
1.2.Վաղարշապատ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարողականների ուսումնասիրության արդյունքների ներկայացում 10
1.3.Վաղարշապատ համայնքի համացանցային պաշտոնական կայքէջի և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի էջի ուսումնասիրություն 14
Գլուխ 2. Վաղարշապատ համայնքի զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների հետ հարցազրույցների ամփոփում 18
2.1 Վաղարշապատ համայնքում տուրիստական կազմակերպության ներկայացուցիչների հետ հարցազրույցի արդյունքների ամփոփում 18
2.2 Վաղարշապատ համայնքում թանգարանային սեկտորի ներկայացուցիչների հետ հարցազրույցի արդյունքների ամփոփում 19
2.3 Վաղարշապատ համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի հետ հարցազրույցի արդյունքների ամփոփում 19
Եզրակացություններ. 22
Առաջարկություններ. 23
Սկզբնաղբյուրներ 24
Հավելած 1. 25
Հավելած 2. 26
Հավելած 3. 27

Ամփոփագիր

Վաղարշապատ համայնքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային նշանակություն ունեցող քաղաքներից մեկը, որի կարևորությունը և զարգացման հեռանկարները ուղենշված են ինչպես Արմավիրի մարզի զարգացման ծրագրերում, այնպես էլ Վաղարշապատ համայնքի զարգացման ծրագրերում: Մասնավորապես, համայնքի 2019-2023 թթ.-ի տարիների զարգացման հնգամյա ծրագիրը կենտրոնանում է Վաղարշապատ համայնքի զբոսաշրջային հնարավորությունների զարգացման, մարզի զբոսաշրջության կենտրոն դարձնելու վրա:

Ելնելով վերոնշյալից՝ հետազոտության հիմնական 3 նպատակներն են սահմանվել՝

1. Ինչպիսի՞ ռազմավարություն և գործողություններ են սահմանել և իրականացրել ՏԻՄ-երը զարգացման պլանով նախատեսված նպատակին հասնելու համար:
2. Որքանո՞վ են արդյունավետ եղել սահմանված ռազմավարությունն ու գործողությունները ոլորտի զարգացման համար:
3. Որո՞նք են զբոսաշրջային ռազմավարության իրականացման խոչընդոտներն ու թերացումները համայնքային իշխանությունների կողմից, ոլորտային քաղաքականության իրականացման կոնտեքստում ի՞նչ գործնական լուծումներ կան:

Հետազոտության իրականացման համար ընտրվել են հետևյալ մեթոդները՝ փաստաթղթային ուսումնասիրություններ և հարցազրույցներ զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների հետ:

Վերոնշյալ ուսումնասիրության արդյունքներով վերհանվել են հետևյալ կարևոր խնդիրները, որոնք հետագա լուծման և ակտիվ աշխատանքների կարիք են ունենալու.

1. Առկա է ոչ պարբերական բնույթ ունեցող համագործակցություն զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի միջև: Հիմնականում համագործակցությունը ակտիվանում են որոշակի տոների, միջոցառումների ընթացքում: Անհրաժեշտ է համագործակցությունը դարձնել պարբերական և ստեղծել կայուն հիմքեր:
2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման առնչությամբ առկա պաշտոնական փաստաթղթերը, մասնավորապես՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրերը, ավելի շատ դեկլարատիվ բնույթի են, սահմանված նպատակներին հասնելու համար չեն բովանդակում չափելի գործողություններ, ոլորտի զարգացման համար իրականացված գործողությունները բավարար չափով ներկայացված չեն հաշվետվություններում:
3. Զբոսաշրջության ոլորտը սպասարկող կազմակերպությունները, մասնավորապես՝ թանգարանները, ունեն ինովացիոն տեխնոլոգիաների, ցուցադրման կահույքի թարմացման կարիք, որոնք թանգարանները կդարձնեն ավելի գրավիչ և ինտերակտիվ զբոսաշրջիկների համար, բացի այդ՝ կարիք կա ստեղծելու և ամրապնդելու համագործակցությունը տուրիստական կազմակերպությունների հետ, որոնք զբոսաշրջային երթուղիներում ավելի հաճախ կներառեն այցեր թանգարաններ:
4. Միևնույն ժամանակ՝ տուրիստական կազմակերպությունները բարձրաձայնում են քաղաքի հավասարաչափ մաքրության պահպանության հարցը, ժամանցային, հանգստի, սննդի կետերի ստեղծման կարևորությունը՝ զբոսաշրջիկին գրավելու և համայնքում պահելու համար:
5. Մարզում և ինչու ոչ համապետական առումով զբոսաշրջության կենտրոն դառնալու համար կարիք կա ոչ միայն ենթակառուցվածքների նորոգման, բարեկարգման, զբոսաշրջիկին սպասարկող ծառայությունների քանակի ավելացման և որակի բարելավման, այլև զբոսաշրջային բրենդի ձևավորման, որը դեռևս պտտվում է միայն համայնքի եկեղեցիների շուրջ: Կարիք կա ավելի թիրախային և հստակ հաղորդակցություն վարել՝

ներկայացնելով Վաղարշապատ համայնքի տուրիստական առավելությունները՝ պատմամշակութային հարուստ ժառանգությունից մինչև քաղաքի պատմություն:

6. Անհրաժեշտ է նաև բարելավել սպասարկման ոլորտի մասնագետների լեզվական կարողությունները զբոսաշրջիկների հետ արդյունավետ հաղորդակցություն ապահովելու համար:

Բոլոր խնդիրների և զարգացման ուղղությունների շուրջ առաջարկվում է իրականացնել հետևյալը.

1. Համայնքում զբոսաշրջության զարգացման վերաբերյալ մշակել թիրախային, իրագործելի, չափելի ռազմավարություն՝ քննարկման և մշակման աշխատանքներում ներառելով ոլորտի շահակիցներին և շահագրգիռ կողմերին: Զբոսաշրջության զարգացման ռազմավարությունում ներառել գործողությունների պլան-ժամանակացույց՝ պատասխանատուներով, գործողության առանցքային ցուցիչներով (KPI) և նախատեսված բյուջեով:
2. Համայնքում զբոսաշրջության ոլորտի զարգացման համար խթանել համագործակցությունը՝ մասնավոր հատվածի, հասարակական, պետական, համայնքային կազմակերպությունների, հիմնադրամների հետ ինչպես տեղական, այնպես էլ ազգային և միջազգային մակարդակներում՝ տալով դրանց ինստիտուցիոնալ բնույթ (կնքելով պայմանագրեր, ստորագրելով հուշագրեր), ինչը հնարավորություն կընձեռնի թիրախային նպատակների շուրջ առավել մեծ ջանքերի գործադրման և նոր ռեսուրսների ներգրավման համար:
3. Զբոսաշրջության ոլորտին ուղղվող ֆինանսական հատկացումները և ծրագրերը անուղղակի՝ այլ ոլորտների միջնորդավորված տարբերակից բացի, ունենալ նաև ուղղակի տարբերակ, որով նաև առանձնահատուկ կընդգծվի դրա կարևոր դերն ու նշանակությունը համայնքի զարգացման համար:
4. Մշակել հաղորդակցության իրատեսական քաղաքականություն և կիրառելի զբոսաշրջային ռազմավարություն համայնքի ունեցած հնարավորությունները հասարակական լայն շրջանակներին ավելի արդյունավետ ներկայացնելու համար, համագործակցելով նաև տեղական ու միջազգային ԶԼՄ-ների հետ:
5. Համայնքում զբոսաշրջության զարգացման ուղղությամբ սպասարկման և զբոսաշրջային ոլորտի այլ շահագրգիռ կողմերին և ներկայացուցիչներին, ոլորտի զարգացման լիազոր մարմնի ներկայացուցիչներին ներգրավել ոլորտի կարիքներին ու լուծումներին ուղղված երկխոսության ու քննարկումների գործընթացում, ինչը կբարձրացնի մշակվող ռազմավարությունների և ծրագրերի հասանելիությունը և արդյունավետությունը:
6. Համապետական նշանակություն ունեցող տոների ընթացքում գործընկերների ներգրավմամբ կազմակերպել մեծածավալ տոնակատարություններ, որոնք դարձնելով ամենամյա՝ համայնքի համար կապահովվի զբոսաշրջային մեծ հոսք:
7. Պլանավորել և իրականացնել զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի հետ որոշակի պարբերականությամբ հանդիպում-քննարկումներ ոլորտի զարգացման հեռանկարների, ուղղությունների, մարտահրավերների, նոր գաղափարների, միասնական ծրագրերի իրականացման վերաբերյալ:
8. Նախաձեռնել զբոսաշրջության ոլորտի աշխատակիցների՝ գիդեր, թանգարանային աշխատողներ, ծառայության ոլորտի աշխատակիցներ, մասնագիտական և լեզվական կարողությունների զարգացման դասընթացներ, մասնավորապես օտար լեզվով հաղորդակցման համար:

Հապավումների ցանկ

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
ՀՀԶԾ - Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ - Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՍՊԸ - Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Ներածություն

Վաղարշապատ համայնքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային նշանակություն ունեցող քաղաքներից մեկը, որի կարևորությունը և զարգացման հեռանկարները ուղենշված են ինչպես Արմավիրի մարզի զարգացման ծրագրերում, այնպես էլ Վաղարշապատ համայնքի զարգացման ծրագրերում: Մասնավորապես, համայնքի վերջին տարիների զարգացման հնգամյա ծրագիրը կենտրոնանում է Վաղարշապատ համայնքի զբոսաշրջային հնարավորությունների զարգացման, մարզի զբոսաշրջության կենտրոն դարձնելու վրա:

Հետազոտության նպատակն է պարզել՝

1. Ինչպիսի՞ ռազմավարություն և գործողություններ է սահմանել և իրականացրել իրավասու մարմինը զարգացման պլանով նախատեսված նպատակին հասնելու համար:
2. Որքանո՞վ են արդյունավետ եղել սահմանված ռազմավարությունն ու գործողությունները ոլորտի զարգացման համար:
3. Որո՞նք են զբոսաշրջային ռազմավարության իրականացման խոչընդոտներն ու թերացումները համայնքային իշխանությունների կողմից, ոլորտային քաղաքականության իրականացման կոնտեքստում ի՞նչ գործնական լուծումներ կան:

Առաջարկվող հետազոտության կարևորությունը կայանում է նրանում, որ այն ցույց է տալիս՝

1. Ինչպիսի՞ գործողություններ է սահմանել և իրականացրել համայնքը զարգացման պլանի նպատակին հասնելու համար:
2. Արդյո՞ք շահագրգիռ կողմերը՝ հյուրանոցային սեկտորի ներկայացուցիչներ, սպասարկման ոլորտի ներկայացուցիչներ, թանգարաններ և այլն, համագործակցել են համայնքի ՏԻՄ-երի հետ ոլորտի զարգացման ուղղությամբ:
3. Ինչպիսի՞ քայլեր է իրականացնում համայնքային իշխանությունը քաղաքի զբոսաշրջային բրենդի զարգացման ուղղությամբ:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության իրականացման համար ընտրվել են հետևյալ մեթոդները՝

1. Փաստաթղթային վերլուծություն /մասնավորապես համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը, դրա կատարողականները/:
2. Հարցազրույցներ ոլորտի շահագրգիռ 3 կողմերի հետ՝ հյուրանոցային սեկտորի, թանգարանային սեկտորի, տուրիստական գործակալության և համայնքապետարանի զբոսաշրջության ոլորտը համակարգող ներկայացուցիչների:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալու՝ ինչպիսի՞ նպատակներ, ռազմավարություն և գործողություններ է սահմանել համայնքի ղեկավար մարմինը, ի՞նչ է իրականացրել և ի՞նչ չափով, իր կողմից նախատեսված ինչպիսի՞ գործողություններ չի իրականացրել և ինչու՞:

Հարցազրույցները շահագրգիռ կողմերի հետ հնարավորություն կտան հասկանալու՝ ի՞նչ ակնկալիքներ ունեն համայնքի ղեկավարությունից ոլորտի զարգացմանը աջակցելու ուղղությամբ, ի՞նչ քայլեր են իրականացրել և ի՞նչ առաջարկներ ունեն ոլորտի զարգացման հետ կապված:

Իրականացվել է Վաղարշապատի (Էջմիածին) համայնքի 2019-2023թթ. հնգամյա զարգացման ծրագրի, ֆեյսբուքյան պաշտոնական էջի և պաշտոնական համացանցային կայքի ուսումնասիրություն, որից հետո՝ վարվել են հարցազրույցներ զբոսաշրջության ոլորտի

ներկայացուցիչների կամ շահագրգիռ կողմերի հետ, որը ներառել է թանգարանային, տուրիստական և համայնքային իշխանության ներկայացուցիչներ:

Գլուխ 1. Զբոսաշրջության զարգացումը Վաղարշապատ համայնքում. Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի 2019-2023թթ հնգամյա զարգացման ծրագրի, ֆեյսբուքյան պաշտոնական էջի և պաշտոնական համացանցային կայքի ուսումնասիրության արդյունքների ներկայացում

1.1.Վաղարշապատ համայնքի 2019-2023թթ հնգամյա զարգացման ծրագրի, համայնքին առնչվող պետական այլ ռազմավարությունների ուսումնասիրություն

Վաղարշապատ համայնքի 2019-2023թթ հնգամյա զարգացման ծրագիրը[1]՝ ընդունված 23.03.2021թ., զբոսաշրջության ուղղությամբ սահմանում է, որ Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի 2019-2023 թվականների հնգամյա զարգացման ծրագրում ևս առաջնահերթություն է տարվում ոլորտին և դրա զարգացմանը՝ «**Մեր տեսլականն է Վաղարշապատը (Էջմիածինը) դարձնել անվտանգ, մաքուր, կանաչապատ, հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր[2] և ներդրումային գրավչության կենտրոն»:** Այդ համատեքստում կարևորվում է «զբոսաշրջային ինքնության ստեղծումը, զբոսաշրջության և նրա հարակից բիզնեսների զարգացումը»:

Մասնավորապես՝ ոլորտի զարգացման խնդիրներ են համարվում՝

1. Հյուրանոցների բացակայությունը,
2. Զբոսաշրջային ենթակառուցվածքների պակասը,
3. Վաղարշապատ համայնքի զբոսաշրջային բրենդի բացակայությունը,
4. Զբոսաշրջիկին անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության և զբոսաշրջային քարտեզների, ինտերակտիվ քարտեզներում օտարալեզու կողմնորոշիչ վահանակների բացակայությունը,
5. Հանրային զուգարանների բացակայությունը,

a. Հանրային կապերի գործընթացի ոչ բավարար մակարդակ

Խնդիրներից զատ, ռազմավարությունը սահմանում է, որ պետք է՝

1. Էջմիածինը դարձնել հյուրանոցային քաղաք՝ լուծելով զբոսաշրջիկներին գրավելու և համայնքում պահելու խնդիրը,
2. «Խելացի քաղաքի» ստեղծումը՝ հագեցումը սմարթ տեխնոլոգիաներով, որը կհեշտացնի զբոսաշրջիկների տեղաշարժը և կենսակերպը քաղաքում (առաջիկա հինգ տարում նախատեսվում է սմարթ այգիների ու խելացի կանգառների կառուցումը),
3. Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում (ճանապարհների, հետիոտնային մայթերի բարեկարգում, շենքերի և մշակութային կոթողների, կառույցների արտաքին լուսավորում):

Հետազոտությունը իրականացնելիս վերլուծության է ենթարկվել նաև համայնքի նախորդ 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը[3]՝ ընդունված 19.12.2016թ., քանի որ՝

1. այն պարունակում էր ավելի կոնկրետ գործողություններ զբոսաշրջության զարգացման ուղղությամբ,
2. Զարգացման հնգամյա ծրագրի հաշվետվություններն ուսումնասիրելիս առկա են որոշ գործողությունների կատարման ամփոփումներ, որոնք վերաբերում են համայնքի 2017-2021թթ. Հնգամյա զարգացման ծրագրին, ոչ թե 2019-2023թթ. Զարգացման ծրագրին:

---

[1] [1] ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ - https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/Projects/Tu2132310562901778_Development-Plan-2019-2023.pdf

[2] ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ - https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/Projects/Tu2132310562901778_Development-Plan-2019-2023.pdf

[3] Էջմիածին քաղաքային համայնքի 2017-2021թթ. Հնգամյա զարգացման ծրագիր https://publicdata.am/wp-includes/publicdata/data/file_com_dev_prog_1278_%D4%B7%D5%BB%D5%B4%D5%AB%D5%A1%D5%AE%D5%AB%D5%B6%20%D5%80%D4%B6%D4%BE.pdf

Ըստ այդմ՝ անհրաժեշտ ենք համարում նաև ներկայացնել համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագրում առկա առաջնահերթությունները և գործողությունները զբոսաշրջության ոլորտի զարգացման ուղղությամբ.

1. Նախատեսվում է Էջմիածնի քաղաքապետարանի համացանցային կայքում (www.ejmiatsin.am) ստեղծել զբոսաշրջային բաժին և մշակել զբոսաշրջության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն,
2. Զբոսաշրջության խթանման համար տեղեկատվական նյութերի ստեղծում՝ ֆիլմեր, հոլովակներ, բուկլետներ, քարտեզներ և այլն,
3. Քաղաքապետարանի աշխատակազմում ունենալ տուրիզմի և քաղաքի զարգացման հարցերով զբաղվող մասնագետներ՝ քաղաքը պատշաճ ձևով ներկայացնելու օտարերկրյա հյուրերին, զբոսաշրջիկներին:

Նշենք, որ ոլորտի զարգացման խնդիրները ժամանակի ընթացքում չեն փոխվել և մոտավորապես նույնական են 2017-2021թթ. և 2019-2023թթ. զարգացման ծրագրերում:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրից բացի, ուսումնասիրության են ենթարկվել նաև **ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը**[4], որտեղ տուրիզմի զարգացումը՝ շեշտը դնելով **հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա, համարվում է առաջնահերթություն**: Նշվում է նաև **Վաղարշապատ համայնքում առկա պատմամշակութային արժեքների ու հոգևոր տուրիզմի պոտենցիալի մասին**: Դիտարկելով նաև վերոնշյալ ռազմավարության իրականացման վերաբերյալ առկա հաշվետվությունները[5]՝ 2018, 2019, 2020, 2021 և 2022 թվականների մասով, պարզվեց, որ ռազմավարությունից բխող գործողությունների և միջոցառումների մասով զբոսաշրջության ոլորտին ուղղված պետական ֆինանսավորում գրեթե չի հատկացվել և լուրջ աշխատանքներ չեն կատարվել. հաշվետվությունների մակարդակով առնվազն արձանագրված չեն՝ կոնկրետ ի՞նչ գործողություններ են կատարվել տուրիզմի զարգացման ուղղությամբ: Անգամ բարեկարգման աշխատանքները ներկայացված չեն տուրիզմի զարգացմանը նպաստելու տեսանկյունից (օրինակ՝ տուրիստական նշանակության փողոցների բարեկարգում, շենք/շինությունների վերանորոգում/արտաքին լուսավորում և այլն):

1.2.Վաղարշապատ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կատարողականների ուսումնասիրության արդյունքների ներկայացում

Էջմիածնի քաղաքապետարանի կայքէջի հին տարբերակի «Համայնքապետարան» բաժնի «Հաշվետվություններ» ենթաբաժնում առկա են զարգացման ծրագրի կատարողական-հաշվետվությունները[6]՝ ըստ տարիների: Փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզ դարձավ՝

1. 2022թ հաշվետվությունում զբոսաշրջության վերաբերյալ առկա է 0 հիշատակում,
2. 2021թ հաշվետվությունում՝ 1 հիշատակում,
3. 2020թ հաշվետվությունում՝ 0 հիշատակում,
4. 2019թ հաշվետվությունում՝ 3 հիշատակում:

2019թ հաշվետվությունում զբոսաշրջության վերաբերյալ առկա է՝

«Մեր նպատակներից մեկն այնպիսի միջավայրի ստեղծումն է, որը գրավիչ ու հետաքրքիր կլինի ոչ միայն քաղաք այցելող զբոսաշրջիկների, այլ նաեւ այստեղ մշտապես բնակվող

[4] Արմավիրի մարզի 2017-2025 թթ.-ի ռազմավարություն - http://armavir.mtad.am/files/docs/27693.pdf
[5] ejmiatsin.am կայքի «Հաշվետվություններ» բաժին - https://docs.ejmiatsin.am/Pages/DocFlow/Def.aspx?a=d&dt=4CDPReports&nt=1&f=true
[6] ejmiatsin.am կայքի «Հաշվետվություններ» բաժին - https://docs.ejmiatsin.am/Pages/DocFlow/Def.aspx?a=d&dt=4CDPReports&nt=1&f=true

մարդկանց համար: Այդ պատճառով 2019 թվականին քայլեր են ձեռնարկվել քաղաքի կենտրոնական հրապարակի շենքերի ու շինությունների արտաքին ճարտարապետական լուսավորության համակարգ ներդնելու ուղղությամբ և Ամանորին ընդառաջ **ճիշտ ու գրագետ լուսավորությամբ են ապահովվել Էջմիածնի Կոմիտասի անվան հրապարակին հարող շենք-շինությունները՝ Մայր Աթոռի Վազգենյան Դարպասը, «Վեոն Արմենիա» ՍՊԸ-ին պատկանող շենքը եւ հրապարակի բազմաբնակարան շենքը, ինչը, վստահաբար, նոր շունչ է հաղորդել մեր քաղաքի սրտին եւ դարձրել այն ավելի ներկայանալի»[7]:**

«Ներքաղաքային տրանսպորտի ներդրմանը զուգահեռ մասնավոր հատվածի հետ համագործակցության շրջանակներում վերջերս Էջմիածնում բացվեցին «Խելացի կանգառ»-ներ: Կանգառը քաղաքացուն տեղեկացնում է մոտեցող ավտոբուսի համարի եւ ժամանման մասին, ունի wi-fi՝ անվճար ու անսահմանափակ, **տեղեկատվական վահանակ զբոսաշրջիկների համար, տեղեկացնում է քաղաքի թանգարանների ու տեսարժան վայրերի մասին, առաջարկում սննդի կետեր եւ այլն»[8]:**

2021թ հաշվետվությունում զբոսաշրջության վերաբերյալ առկա է՝

«Սիրելի՛ համաքաղաքացիներ, մեր նպատակներից մեկն է եղել քաղաքի գրավչությունը մեծացնել ոչ միայն այցելող զբոսաշրջիկների, այլ նաև այստեղ մշտապես բնակվող մարդկանց համար», որը կրկնվում է նաև 2019 թվականի տարեկան հաշվետվության մեջ[9]**:**

Ուսումնասիրելով զբոսաշրջության մասին հիշատակում ունեցող 2019 և 2021թթ հաշվետվությունները, պարզ է դառնում՝

1. Արտաքին լուսավորության համակարգով են ապահովվել գրեթե նույն կառույցները,
2. Հիմնականում զբոսաշրջությանը անդրադառնալիս շեշտադրվում են բարեկարգման աշխատանքները՝ լուսավորության ապահովում, ասֆալտապատում, կանաչապատում:

Ընդհանուր առմամբ, հաշվետվություններն ուսումնասիրելիս պարզ դարձավ՝ կան որոշ նույնական գործողություններ, օրինակ՝ 2019 և 2020թթ. հաշվետվություններում, այն է՝

«2020-ին շարունակել ենք քաղաքի պատմամշակութային շինությունները արտաքին գեղարվեստական լուսավորությամբ էլ ավելի գեղեցկացնելու աշխատանքները՝ կերտելով քաղաքի դիմագիծը. լուսավորվել են Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցի եւ Խորեն Տեր-Հարության թանգարանի շենքերը»[10]:

Եզրահանգում. Տարեկան ամփոփիչ հաշվետվություններում զբոսաշրջության վերաբերյալ առկա են շատ քիչ թվով հիշատակումներ, որոշներում՝ ընդհանրապես առկա չեն: Հաշվետվություններում չկա անդրադարձ զարգացման ծրագրում սահմանված ոլորտի հիմնախնդիրներին՝ գործողությունները ո՞ր հիմնախնդիրների լուծմանն են ուղղված: Հաշվետվությունները հիմնականում բովանդակում են քաղաքի ենթակառուցվածքների բարեկարգման մասին հաշվետվություններ՝ փողոցների ասֆալտապատում, արտաքին լուսավորության անցկացում, այգիների կանաչապատում և այլն, որոնք կապվում են զբոսաշրջիկի համար բարենպաստ միջավայր ստեղծելու հետ: Մարզի զարգացման 2017-2025թթ.-ի ռազմավարությամբ շեշտադրված ոլորտները և այդ համատեքստում Վաղարշապատ համայնքի կարևորությունը **գործնականում չի արժանացել բավարար**

---

[7] ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ- https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/4CDPReports/Tu2132317222221778_Report2019.pdf

[8] ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ- https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/4CDPReports/Tu2132317222221778_Report2019.pdf

[9] ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ- https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/4CDPReports/Mo2330610293801943_2021.pdf

[10] ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/4CDPReports/Tu2132312015481778_Report2020.pdf

ուշադրության՝ ֆինանսական հատկացումների կամ ծրագրային այլ միջոցառումների տեսքով:

Համայնքի 2021 և 2022 թվականների տարեկան բյուջեների վերլուծություն

Ուսումնասիրելով ejmiatsin.am կայքը և հենվելով Վաղարշապատ համայնքի կողմից ուղարկված հարցումների պատասխանների վրա՝ կարող ենք արձանագրել, որ համայնքի 2019-2023 թվականների հնգամյա զարգացման պլանի 2021թ. և 2022թ. տարեկան հաշվետվություններին կից առկա են նաև համայնքի նույն տարիների բյուջեների կատարման հաշվետվություններ:

Համայնքի 2021թ տարեկան բյուջեի հաշվետվությունում առկա է հետևյալ պատկերը՝

Ըստ բնագավառների կատարվել են ծախսեր.

1. Քաղաքապետարանի պահպանման ծախսեր 231365.2 հազ. դրամ
2. Կրթության համակարգի ծախսեր- 360150.0 հազ. դրամ
3. Սպորտի համակարգի ծախսեր- 108801.0 հազ. դրամ
4. Մշակույթի համակարգի ծախսեր- 216189.7 հազ. դրամ
5. Բարեկարգման ծախսեր- 294256.4 հազ. դրամ
6. Բնակ. կոմունալ վարչության ծախսեր- 48745.6 հազ. դրամ
7. Սան. մաքրում և աղբահանություն- 264262.3 հազ. դրամ
8. Սոցիալական ֆոնդի ծախսեր- 23437.5 հազ. դրամ
9. Համաքաղաքային միջոցառումների ծախսեր- 11573.5 հազ. դրամ
10. Անասնաբուժական ծառայություն- 990.0 հազ. դրամ
11. Պատվիրակված լիազորությունների ծախսեր- 7097.3 հազ. դրամ
12. Ֆոնդային բյուջեի միջոցներից ծախսվել է- 625549.5 հազ. դրամ:[11]

Բյուջեի ծախսերում չկան հիշատակումներ՝ որքա՞ն է հատկացրել համայնքային իշխանությունը զբոսաշրջությունը զարգացնելու համար և ինչպիսի՞ գործողություններ է իրականացրել: Ոլորտի զարգացմանն ուղղված ծախսերը ավելի շատ անուղղակի են: Քանի որ 2021թ. բյուջեի տարեկան հաշվետվությունում որպես նպատակ է սահմանվել քաղաքի գրավչության մեծացումը՝ բարեկարգման միջոցով, հետևաբար զբոսաշրջության ոլորտի զարգացման անուղղակի ծախս կատարվել է *բարեկարգման աշխատանքներում:* Բացի այդ՝ զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերից թանգարանային սեկտորի ներկայացուցիչների հետ հարցազրույցում առկա են հիշատակումներ, որ համայնքային իշխանությունը տարեկան կտրվածքով գումար է հատկացնում տեղական և հանրապետական նշանակության մշակութային միջոցառումների կազմակերպման համար, որոնք իրենց հերթին, ներգրավում են զբոսաշրջիկներ ինչպես ՀՀ-ից, այնպես էլ արտասահմանից: Ուստի, զբոսաշրջության ոլորտի զարգացման անուղղակի ծախսեր կան նաև *մշակութային համակարգի և համայնքային միջոցառումների ծախսեր բաժիններում:* Վերլուծելով համայնքի 2021թ. բյուջեի տարեկան հաշվետվությունը, ստացվում է, որ զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված ծախսերը անուղղակի են՝ ներառված են բարեկարգման, մշակութային և համայնքային միջոցառումների կազմակերպման ծախսերում, որոնք կազմում են ընդհանուր բյուջեի 19%-ը (Գծապատկեր 1.)

[11] ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/4CDPReports/Mo2330610293801943_2021.pdf?fbclid=IwAR2nV4fSwKaSzu7ibWV5cTmCvED6MxqyfIg3yAoYNU6DDITGsPO4Fnv02qM



Գծապատկեր 1. Վաղարշապատ համայնքի 2021թ. տարեկան բյուջեի կատարման վերլուծություն

Գրեթե նույն պատկերն առկա է նաև համայնքի 2022թ. տարեկան բյուջեի հաշվետվությունում (Գծապատկեր 2.)[12]:

Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեից ծախս է կատարվել 2455622,0 հազ. դրամ:
Ըստ բնագավառների կատարվել են հետևյալ ծախսերը.
1. Համայնքի պահպանման ծախսեր 237199,9 հազ. դրամ
2. Կրթության համակարգի ծախսեր- 4 35641,7 հազ. դրամ
3. Սպորտի համակարգի ծախսեր- 121377,0 հազ. դրամ
4. Մշակույթի համակարգի ծախսեր- 255332,3 հազ. դրամ
5. Բարեկարգման ծախսեր- 315882,5 հազ. դրամ
6. Բնակ. կոմունալ վարչության ծախսեր- 23981,4 հազ. դրամ
7. Սան. մաքրում և աղբահանություն- 260239,6 հազ. դրամ
8. Սոցիալական ֆոնդի ծախսեր- 26566,6 հազ. դրամ
9. Համաքաղաքային միջոցառումների ծախսեր- 12511,2 հազ. դրամ
10. Անասնաբուժական ծառայություն- 2106,5 հազ. դրամ
11. Կապիտալ դրամաշնորհներ - 1020,0 հազ. դրամ
12. Ֆոնդային բյուջեի միջոցներից ծախսվել է- 763803,3 հազ. Դրամ

[12] ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ- https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/CouncilorDecision/Tu231311442119181 8_1tarekan.pdf?fbclid=IwAR2PYGL7_bmspzkpkNHrNQ1ct0VyM8uWdaQeh17-9S-P6QCR_KE48OxT-lU



Գծապատկեր 2. Վաղարշապատ համայնքի 2022 թ. տարեկան բյուջեի կատարման վերլուծություն

Սակայն, ի տարբերություն համայնքի 2021թ. բյուջեի կատարման հաշվետվության՝ 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունում քաղաքի բարեկարգումը հիշատակված չէ զբոսաշրջության զարգացման համատեքստում, բայց, հաշվի առնելով նախորդ փորձը, կարող ենք համարել, որ 2022թ. տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունում նույնպես բարեկարգման, մշակութային և համայնքային միջոցառումների կազմակերպմանն ուղղված ծախսերը անուղղակի նպաստել են զբոսաշրջության զարգացմանը:

Որպես ամփոփում պետք է նշենք՝ զբոսաշրջության զարգացմանն առնչվող փաստացի համայնքի միայն 2021թ. և 2022թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններն ունեն բյուջեի՝ եկամուտների և ծախսերի վերաբերյալ բաժիններ: Միևնույն ժամանակ, պետք է նաև նշել, որ 2021թ. և 2022թ. տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունները չեն ներառում ուղղակի ծախսեր՝ ուղղված զբոսաշրջության ոլորտին, առկա ծախսերից միայն 3-ը՝ բարեկարգման, մշակութային և համայնքային միջոցառումների կազմակերպման ծախսերը անուղղակի նպաստում են զբոսաշրջության ոլորտի զարգացմանը՝ համայնքը ավելի գրավիչ դարձնելով:

1.3.Վաղարշապատ համայնքի համացանցային պաշտոնական կայքէջի և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի էջի ուսումնասիրություն

Վաղարշապատ համայնքի զբոսաշրջության ոլորտի ուսումնասիրությունից առաջ գրավոր հարցում ենք ուղարկել Վաղարշապատի համայնքապետարան՝ ճշտելու համար այն հարթակները, որտեղից հնարավոր էր ստանալ ոլորտի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Ի պատասխան մեր հարցմանը՝ ստացել ենք Վաղարշապատ համայնքի ղեկավարի գրությունը: Այնտեղ նշվում է, որ համայնքապետարանն օգտագործում է պաշտոնական երկու կայք՝ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը և համայնքապետարանի համացանցային կայքը, որը մինչև այս պահը(05.04.2023) գտնվում է արդիականացման փուլում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում՝ գրության մեջ նշված կայքերից առաջինում չգտնվեց որևէ տեղեկատվություն զբոսաշրջության և ոլորտի զարգացման

վերաբերյալ: Վաղարշապատի համայնքապետարանի երկրորդ կայքում[13] կա առանձին բաժին ուսումնասիրվող ոլորտի վերաբերյալ՝ «Զբոսաշրջիկի անկյուն»[14]: Մուտք գործելով այդ հղմամբ՝ առանձնացված տեսնում ենք «Պատմություն», «Խորհրդանիշեր», «Եկեղեցիներ», «Թանգարաններ» և «Հուշարձաններ» բաժինները: Կայքը զբոսաշրջիկին հնարավորություն է տալիս հայերեն և անգլերեն լեզուներով ծանոթանալ՝ Էջմիածնի համառոտ պատմությանը, ուսումնասիրել քաղաքի 4 խորհրդանիշները, ստանալ տեղեկատվություն քաղաքի 5 եկեղեցիների և 8 թանգարանների մասին, ինչպես նաև իմանալ քաղաքում գտնվող թվով 19 հուշարձանների հասցեները: Ընդհանուր առմամբ՝ եթե դիտարկում ենք կայքի համապատասխան բաժինը շարքային օգտագործողի տեսանկյունից, այն պարունակում է զբոսաշրջության և զբոսաշրջային ուղղությունների վերաբերյալ տեղեկատվություն, տեղադրված բոլոր հղումները և հիպեր հղումները գործում են, կայքը աշխատում է անխափան, առկա է երկլեզու թարգմանություն, սակայն որքանով է այն բավարարում զբոսաշրջիկի պահանջները, դժվար է ասել, քանի որ նման տվյալներ հետազոտող խմբին հասանելի չեն:

«Էջմիածնի քաղաքապետարան»[15] ֆեյսբուքյան էջի ուսումնասիրության արդյունքում զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ գտնվել է երեք հրապարակում: 2019 թվականի ապրիլի 15-ի հրապարակմամբ նշվում է[16], որ Էջմիածնի և Ֆրանսիայի Հանրապետության Իսի լե Մուլինո քաղաքների միջև համագործակցության 30-ամյակի շրջանակներում կայացած պաշտոնական այցի ընթացքում՝ ստորագրվել է ″Smart Cities″ «խելացի քաղաքների» վերաբերյալ համագործակցության պայմանագիր: Պայմանագրով սահմանված առաջնային զարգացման ոլորտներից է զբոսաշրջությունը: 2021 թվականի հունիսի 29-ի հրապարակման մեջ[17] նշվում է, որ Էջմիածնի համայնքապետ Դիանա Գասպարյանը Ալմելոյի (Նիդերլանդների Թագավորություն) իր գործընկերոջ՝ Այրեն Խերիտցնի հետ ստորագրեցին Էջմիածին ու Ալմելո քաղաքների միջեւ համագործակցության փոխհամաձայնության հուշագիր: Հուշագիրը նպատակ ունի զարգացնել երկու քաղաքների միջև փոխշահավետ բարեկամական համագործակցությունը մի շարք ոլորտներում, որոնցից է նաև զբոսաշրջությունը: 2021 թվականի օգոստոսի 16-ի հրապարակմամբ նշվում է[18], որ քաղաքի Ալավերդյան 8 հասցեում բացվել է նոր հյուրանոցային եւ ռեստորանային համալիր, որը ոչ միայն կապահովի նոր աշխատատեղեր, այլ նաև կստեղծի կոլորիտային միջավայր եւ հաճելի ժամանցի կազմակերպման հնարավորություն ինչպես քաղաքի բնակիչների, այնպես էլ հյուրերի համար: Համայնքապետարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ չեն կատարվել կամ պատշաճ չեն լուսաբանվել զբոսաշրջության բուն ոլորտին վերաբերող աշխատանքները:

Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի պաշտոնական ֆեյսբուքյան էջը նույնպես ուսումնասիրվել է: Զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ չի գտնվել որևէ հրապարակում, բացառությամբ համայնքապետարանի պաշտոնական էջում գտած և վերևում նշած հրապարակումների վերաձևակերպումների:

Ուսումնասիրվել է նաև ՀՀ զբոսաշրջության կոմիտեի[19] պաշտոնական ֆեյսբուքյան էջը: Վաղարշապատ համայնքին վերաբերող որևէ հրապարակում չկա:

---

[13] https://ejmiatsin.am/
[14] https://ejmiatsin.am/our-city/
[15] Էջմիածնի քաղաքապետարան / Municipality of Ejmiatsin- https://www.facebook.com/MUNICIPALITY.EJMIATSIN
[16] Ապրիլի 15-ի հրապարակում
[17] Հունիսի 29-ի հրապարակում
[18] Օգոստոսի 16-ի հրապարակում
[19] ՀՀ Զբոսաշրջության կոմիտե/Tourism Committee of RA | Facebook

Այս մասով կարող ենք արձանագրել, որ ոլորտի զարգացման համար իրականացված գործողությունները քիչ են լուսաբանվել պաշտոնական հարթակներում, ինչը չի նպաստում հանրային կապերի գործընթացի բարելավմանը:

Ամփոփում

1. Համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը բովանդակում է զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները, ուղղություններ և դրանց հասնելու համար գործողություններ[20], որը մոտավորապես նույնական է 2019-2023թթ. հնգամյա զարգացման ծրագրի հետ[21],
2. ՀՀԶԾ-ների տարեկան հաշվետվություններում զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ առկա ամփոփումները ներառում են ավելի շատ քաղաքի բարեկարգման աշխատանքների ներկայացում, որոնք նպաստելու են քաղաքի տուրիստական գրավչության բարձրացմանը, այս տեսանկյունից ասվածը շարքային քաղաքացու գնահատմամբ դրական է, քանի որ բարեկարգվել են քաղաքի կենտրոնական նշանակություն ունեցող փողոցները՝ երթևեկելի և ոչ երթևեկելի հատվածներով, բայց որքանո՞վ է այդ հանգամանքը նպաստել տուրիզմի զարգացմանը, հստակ չէ, քանի որ համայնքային իշխանությունը չունի նման տվյալներ և վերլուծություններ, իսկ համացանցում առկա բաց աղբյուրներում բացակայում են նման հետազոտություններ:
3. Չնայած զբոսաշրջիկի համար նախատեսված տեղեկատվական հարթակի ստեղծումը խոստացվել է համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրում[22], ու որպես հիմնախնդիր ֆիքսվել է նաև համայնքի 2019-2023թթ. հնգամյա զարգացման ծրագրում, և կյանքի է կոչվել գաղափարը՝ ստեղծելով «Զբոսաշրջիկի անկյուն»[23], սակայն դա առկա չէ ՀՀԶԾ-ների իրականացման տարեկան հաշվետվություններում,
4. Հաշվետվությունները չեն բովանդակում գործուն օրինակների ներկայացում զբոսաշրջության ոլորտի տնտեսվարողների հետ համագործակցության վերաբերյալ, չնայած որպես առաջնահերթություն ֆիքսված է երկու զարգացման ծրագրերում էլ,
5. Հանրային կապերի գործընթացում ոչ բավարար աշխատանքը շարունակում է զգացվել զբոսաշրջության գրավչության բարձրացման համար, քանի որ իրականացված միջոցառումները և/կամ բավարար չեն լուսաբանվել, և/կամ առհասարակ համապատասխան գործողություններ չեն իրականացվել, ինչպես ֆիքսված է զարգացման ծրագրերում՝ տեղեկատվական նյութերի տարածում, հոլովակների պատրաստում, բուկլետների տպագրում և այլն:

[20] ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ- https://publicdata.am/wp-includes/publicdata/data/file_com_dev_prog_1278_%D4%B7%D5%BB%D5%B4%D5%AB%D5%A1%D5%AE%D5%AB%D5%B6%20%D5%80%D4%B6%D4%BE.pdf

[21] ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ - https://docs.ejmiatsin.am/upload/DocFlow/Projects/Tu2132310562901778_Development-Plan-2019-2023.pdf

[22] file_com_dev_prog_1278_Էջմիածին ՀԶԾ.pdf (publicdata.am), էջ 39, կետ՝ 7.

[23] Official Website of the Municipality of Ejmiatsin

Գլուխ 2. Վաղարշապատ համայնքի զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների հետ հարցազրույցների ամփոփում

2.1 Վաղարշապատ համայնքում տուրիստական կազմակերպության ներկայացուցիչների հետ հարցազրույցի արդյունքների ամփոփում

Հարցազրույցի իրականացման համար ընտրվել էր համայնքում գործունեություն ծավալող 2 տուրիստական կազմակերպություն, որոնցից 1-ինը տարեկան կտրվածքով Վաղարշապատ համայնք է բերում շուրջ 5000 զբոսաշրջիկ, իսկ 2-րդը՝ 30.000:

Հարցազրույցի ընթացքում (հարցաշարը տե՛ս Հավելված 2-ում) պարզ դարձավ՝ տուրիստական կազմակերպությունները որևէ ձևաչափով չեն համագործակցել համայնքային իշխանության հետ: Մասնակիցների կողմից հնչեց կարծիք, որ, հավանաբար, համայնքային իշխանությունը զբոսաշրջության զարգացման ուղղությամբ ավելի շատ աշխատում/համագործակցում է մշակութային կազմակերպությունների հետ, օրինակ, թանգարանների, քան տուրիստական կենտրոնների, սակայն կազմակերպությունները հնարավորության դեպքում պատրաստակամություն հայտնեցին համագործակցել:

«Առայժմ դեռ նման փորձ չունենք, չեմ կարող ասել ստացված կլինի, թե ոչ, բայց եթե հնարավորություն ստեղծվի համայնքային իշխանությունների հետ նման համագործակցության, ապա կարծում եմ՝ մեր տուրիստական կազմակերպությունը կօգտվի դրանից»:

Հարցին՝ արդյո՞ք գործունեության ընթացքում բախվել են խոչընդոտների, կազմակերպություններից մեկը տվեց բացասական պատասխան, մյուսը նշեց, որ առաջնահերթ ոլորտում աշխատելով՝ նկատել է 2 հիմնական խնդիրներ՝ քաղաքի մաքրությունը կամ սելեկտիվ մաքրությունը (ի նկատի ունի՝ քաղաքի կենտրոնական շրջանները մաքուր են, ծայրամասերը՝ կեղտոտ) և զբոսաշրջիկների համար նախատեսված տարածքների սակավությունը կամ համարյա բացակայությունը:

«Տուրիստական ընկերությունների հետ համայնքային իշխանությունների համագործակցությունը լավ ու արդյունավետ կազմակերպելու համար՝ առաջին հերթին, շատ կարևոր է քաղաքի մաքրությունը: Այսինքն, երբ մենք զբոսաշրջիկներ ենք բերում քաղաք, շատ կարևոր է, որ զբոսաշրջիկի համար առաջին տպավորությունը Վաղարշապատ քաղաքի վերաբերյալ լինի դրական: Երկրորդը, որ տարածքներ լինեն, կամ հատուկ առանձին տարածք հատկացվի, որտեղ զբոսաշրջիկները կկարողանան հանգստանալ կամ ընդմիջում անել»:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման ուղղությամբ տուրիստական կազմակերպությունների ներկայացուցիչները ընդգծեցին՝ համայնքը իրապես ունի տուրիստական ռեսուրս, անգամ հավակնում է դառնալ Արմավիրի մարզի տուրիստական կենտրոնը, ինչպես նաև զբոսաշրջային հանրապետական կենտրոններից մեկը: Ոլորտի զարգացման ուղղությամբ հարցազրույցի մասնակիցները առաջարկեցին՝ նախ, սոցիալական գովազդների, արշավների տեսքով ծանոթացնել զբոսաշրջիկին համայնքին, հետո՝ զբոսաշրջության զարգացման համար դիտարկել նաև համայնքի պատմական ուղու, բացի եկեղեցիներից, պատմամշակութային այլ կոթողների ներկայացումը զբոսաշրջիկներին: Բացի այդ, ներկայացուցիչները նշեցին՝ կարիք կա ավելացնելու հանգստի, ժամանցի, սննդի վայրերը զբոսաշրջիկներին գրավելու և համայնքում պահելու համար:

2.2 Վաղարշապատ համայնքում թանգարանային սեկտորի ներկայացուցիչների հետ հարցազրույցի արդյունքների ամփոփում

Հարցազրույց է կազմակերպվել (հարցաշարը տե՛ս Հավելված 1-ում) Վաղարշապատ համայնքի 2 համայնքապատկան թանգարանների (ՀՈԱԿ-ներ) ներկայացուցիչների հետ, որոնք նշել են՝ ֆինանսական միջոցներ՝ աշխատավարձից մինչև նյութատեխնիկական ռեսուրսների բարելավում և շենքային պայմանների բարեկարգում, ստանում են համայնքային բյուջեից: Որոշ հարցերում աջակցում են նաև անհատ բարերարները, որոնք իրականացնում են նվիրատվություններ: Ավելի պասիվ են համագործակցությունները ՀԿ-ների և հիմնադրամների հետ:

«Վերջին անգամ դրամաշնորհ ենք ստացել 2008 թվականին, ավելի հաճախ ստանում ենք նվիրատվություններ» («Վաղարշապատ համայնքի Պատմամշակութային թանգարան» ՀՈԱԿ, տնօրեն):

Հարցին՝ արդյո՞ք թանգարանը մասնակցում է համայնքի մշակութային, զբոսաշրջային կյանքի կազմակերպմանը՝ թանգարանային սեկտորի ներկայացուցիչները պատասխանեցին, որ համայնքապետարանի հետ սերտ համագործակցության մեջ են այդ ուղղությամբ: Հատկապես համայնքային և պետական նշանակության տոներին պատրաստվում են համայնքային իշխանության հետ համագործակցությամբ: Միևնույն ժամանակ, հարցազրույցի մասնակիցները կարծում են, որ իրենց գործունեության շրջանակներում, ավելի մեծ թվով այցելուներ ներգրավվելու համար, պետք է համագործակցեն զբոսաշրջային կազմակերպությունների հետ:

«...որպեսզի Հայաստան եկող, թեկուզ Էջմիածին եկող բոլոր տուրիստները այցելեն թանգարաններ: Տուրիստական կազմակերպությունները չեն բերում զբոսաշրջիկներին թանգարաններ, քանի որ, օրինակ, բացակայում են պետքարանները կամ տարածքում չկան արագ սննդի կետեր: Ասում են՝ 2-3 ժամով են գալիս Էջմիածին, բերենք թանգարան, որ ի՞նչ անեն... այդ ընթացքում քաղաքում պտտվում գնում են» («Վաղարշապատ համայնքի Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրեն):

Ավելի շատ զբոսաշրջիկների ներգրավելու հաջորդ հնարավորությունը թանգարանները նորագույն տեխնոլոգիաներով, հատկապես՝ ցուցադրման համար ժամանակակից և ինտերակտիվ կահույքով/տեխնիկայով զինելու մեջ է, որոնք թանգարանները կդարձնեն ավելի ինտերակտիվ, գրավիչ զբոսաշրջիկների համար:

2.3 Վաղարշապատ համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի հետ հարցազրույցի արդյունքների ամփոփում

Նշենք՝ Վաղարշապատ համայնքի 2019–2023թթ հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված է համայնքապետարանի աշխատակազմում ունենալ զբոսաշրջության ոլորտը համակարգող մասնագետ, սակայն համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի փոխանցմամբ՝ մասնագետը դեռ չկա, քանի որ հաստիքացուցակով դեռևս սահմանված չէ, ուստի հարցազրույցը իրականացավ հենց նրա հետ (հարցաշարը տե՛ս Հավելված 3-ում):

Հարցազրույցի մասնակիցը նշեց, որ ոլորտում լուրջ խնդիրներ չունեն. համայնքը հայտնի է իր զբոսաշրջային հնարավորություններով, սակայն հիմնական խնդիրը զբոսաշրջային ուղղությունը «եկեղեցիների քաղաքից» փոխելն է:

«Մեր խնդիրն է զբոսաշրջիկներին, բացի եկեղեցիներից, կենտրոնացնել այլ բաների վրա, որոնք կան համայնքում, օրինակ՝ պատմամշակութային կոթողների, այդ առնչությամբ իրականացնում ենք տարբեր միջոցառումներ, ներառյալ մշակութային»: Վաղարշապատ համայնքի ղեկավարի մամուլի խոսնակ:

Մշակութային միջոցառումներից հարցազրույցի մասնակիցը առանձնացրեց 2019 թվականից մեկնարկած «Փոքրիկ Քայլ» մանկական-երաժշտական փառատոնը, որը մինչև 2022 թվականը կրում էր տեղական բնույթ և նպաստում էր ներգնա տուրիզմի զարգացմանը: Համայնքային իշխանությունը որոշել է այս տարի կազմակերպել մանկական-երաժշտական միջազգային փառատոն՝ հրավիրելով Էջմիածին համայնքի քույր քաղաքներից ներկայացուցիչների, փառատոնի մասնակիցների՝ զբոսաշրջության զարգացման և միջազգային զբոսաշրջիկներին ներգրավելու համար:

Հարցազրույցի մասնակիցը ավելացրեց նաև, որ տարաբնույթ միջոցառումների կազմակերպման ժամանակ համագործակցում ենք համայնքում առկա ռեստորանների, հյուրանոցների և այլ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ:

«Փորձում ենք զբոսաշրջիկին պահել մեր համայնքում, որ չնախընտրի գիշերել կամ սնվել Երևանում, այդ պատճառով սերտ աշխատում ենք լոկալ ծառայություններ մատուցող սպասարկման ոլորտի կազմակերպությունների հետ»: (Վաղարշապատ համայնքի ղեկավարի մամուլի խոսնակ):

Իրականացվող միջոցառումների շարքում հարցազրույցի մասնակիցը նշեց նաև քաղաքային գրադարանի նոր մասնաշենքի կառուցումը, որը ծառայելու է որպես գրադարան-սրճարան: Այն կկառուցվի մասնավոր սեկտորի հետ համագործակցությամբ: Նախագծման և նախապատրաստական աշխատանքներն արդեն սկսված են:

Համայնքի ղեկավարի մամուլի խոսնակը ավելացրեց՝ «Վերջին տարիներին ակտիվ շինարարություն և ձեռնարկատիրական գործունեություն է ծավալվում համայնքում: Բարեկարգվում և ասֆալտապատվում են տուրիստական նշանակություն ունեցող փողոցները, անցկացվում և/կամ թարմացվում է ճարտարապետական կարևոր նշանակություն ունեցող շենքերի արտաքին լուսավորության համակարգը: Ձեռնարկատիրական տեսանկյունից՝ վերջին տարիներին բացվել է 2 խոշոր հյուրանոց, 1 մեծ սննդի կետ և այլ փոքր սննդի կետեր և հյուրատներ»:

Ինչ վերաբերում է զբոսաշրջության զարգացման քաղաքականությանը կամ ռազմավարությանը, հարցազրույցի մասնակիցը նշեց, որ համապատասխան փաստաթուղթ դեռ առկա չէ, մշակման փուլում է, որը կկցվի համայնքի հնգամյա զարգացման նոր ծրագրին:

«Ի՞նչ է նախատեսում իրականացնել համայնքապետարանը տուրիզմի զարգացման ուղղությամբ» հարցին մասնակիցը պատասխանեց՝ «ա/ տուրիստական նշանակության փողոցների և մայթերի բարեկարգման շարունակում, բ/ շենքերի, արձանների և մշակութային կոթողների արտաքին լուսավորությունների ապահովում, գ/ թանգարաններում աուդիոգիդի ծառայությունների ներդրում, այդ ամենը, ըստ էության ներառվելու է հնգամյա զարգացման ռազմավարության մեջ»:

Վաղարշապատ համայնքի ղեկավարի մամուլի խոսնակի համոզմամբ՝ միայն համայնքային իշխանության աշխատանքը բավարար չէ ոլորտի ադեկվատ զարգացման համար, իր հերթին սպասարկման ոլորտի շահագրգիռ կողմերը ևս պետք է նվազագույնը բարեխիղճ աշխատեն, որ զբոսաշրջիկը գոհ գնա համայնքից և հետ վերադառնալու ցանկությամբ: Միևնույն ժամանակ, հարցազրույցի մասնակիցը կարևորեց սպասարկման ոլորտի մասնագետների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացումը, քանի որ, իր համոզմամբ, լեզվական խոչընդոտները, վատ հաղորդակցությունը ևս կարող է բացասաբար ազդել ոլորտի զարգացման վրա:

Իսկ «Ի՞նչ խնդիրներ/մարտահրավերներ կան զբոսաշրջության զարգացման ուղղությամբ» հարցի հետ կապված՝ զրուցակիցը նշեց՝ «Ամենամեծ խնդիրը Էջմիածինը այլ տեսանկյունից ներկայացնելն է, զբոսաշրջիկին չպետք է հետաքրքրեն միայն եկեղեցիները, մեր խնդիրն է գրավիչ դարձնել նաև պատմամշակութային կոթողները, ժամանցի և հանգստի վայրերը: Այդ

առնչությամբ համայնքի ղեկավարը պարբերաբար հանդիպումներ է ունենում ոլորտի ներկայացուցիչների հետ: Իսկ քաղաքի բրենդավորման հետ կապված դեռ ոչ մի փաստաթուղթ կամ քաղաքականություն չունենք»:

Եզրակացություններ.

Ամփոփելով կատարված հարցազրույցների արդյունքները՝ կարող ենք վերհանել հետևյալ կարևոր ուղղությունները, որոնք հետագա բարելավման և ակտիվ աշխատանքների կարիք են ունենալու.

1. Առկա է ոչ պարբերական բնույթ ունեցող համագործակցություն զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի միջև: Հիմնականում համագործակցությունը ակտիվանում են որոշակի տոների, միջոցառումների ընթացքում: Անհրաժեշտ է համագործակցությունը դարձնել պարբերական և ստեղծել կայուն հիմքեր:
2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման առնչությամբ առկա պաշտոնական փաստաթղթերը, մասնավորապես՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրերը, ավելի շատ դեկլարատիվ բնույթի են, սահմանված նպատակներին հասնելու համար չեն բովանդակում չափելի գործողություններ, ոլորտի զարգացման համար իրականացված գործողությունները բավարար չափով ներկայացված չեն հաշվետվություններում:
3. Զբոսաշրջության ոլորտը սպասարկող կազմակերպությունները, մասնավորապես՝ թանգարանները, ունեն ինովացիոն տեխնոլոգիաների, ցուցադրման կահույքի թարմացման կարիք, որոնք թանգարանները կդարձնեն ավելի գրավիչ և ինտերակտիվ զբոսաշրջիկների համար, բացի այդ՝ կարիք կա ստեղծելու և ամրապնդելու համագործակցությունը տուրիստական կազմակերպությունների հետ, որոնք զբոսաշրջային երթուղիներում ավելի հաճախ կներառեն այցեր թանգարաններ:
4. Միևնույն ժամանակ՝ տուրիստական կազմակերպությունները բարձրաձայնում են քաղաքի հավասարաչափ մաքրության պահպանության հարցը, ժամանցային, հանգստի, սննդի կետերի ստեղծման կարևորությունը՝ զբոսաշրջիկին գրավելու և համայնքում պահելու համար:
5. Մարզում և ինչու ոչ համապետական առումով զբոսաշրջության կենտրոն դառնալու համար կարիք կա ոչ միայն ենթակառուցվածքների նորոգման, բարեկարգման, զբոսաշրջիկին սպասարկող ծառայությունների քանակի ավելացման և որակի բարելավման, այլև զբոսաշրջային բրենդի ձևավորման, որը դեռևս պտտվում է միայն համայնքի եկեղեցիների շուրջ: Կարիք կա ավելի թիրախային և հստակ հաղորդակցություն վարել՝ ներկայացնելով Վաղարշապատ համայնքի տուրիստական առավելությունները՝ պատմամշակութային հարուստ ժառանգությունից մինչև քաղաքի պատմություն:
6. Անհրաժեշտ է նաև բարելավել սպասարկման ոլորտի մասնագետների լեզվական կարողությունները զբոսաշրջիկների հետ արդյունավետ հաղորդակցություն ապահովելու համար:

Առաջարկություններ.

1. Համայնքում զբոսաշրջության զարգացման վերաբերյալ մշակել թիրախային, իրագործելի, չափելի ռազմավարություն՝ քննարկման և մշակման աշխատանքներում ներառելով ոլորտի շահակիցներին և շահագրգիռ կողմերին: Զբոսաշրջության զարգացման ռազմավարությունում ներառել գործողությունների պլան-ժամանակացույց՝ պատասխանատուներով, գործողության առանցքային ցուցիչներով (KPI) և նախատեսված բյուջեով:
2. Համայնքում զբոսաշրջության ոլորտի զարգացման համար խթանել համագործակցությունը՝ մասնավոր հատվածի, հասարակական, պետական, համայնքային կազմակերպությունների, հիմնադրամների հետ ինչպես տեղական, այնպես էլ ազգային և միջազգային մակարդակներում՝ տալով դրանց ինստիտուցիոնալ բնույթ (կնքելով պայմանագրեր, ստորագրելով հուշագրեր), ինչը հնարավորություն կընձեռնի թիրախային նպատակների շուրջ առավել մեծ ջանքերի գործադրման և նոր ռեսուրսների ներգրավման համար:
3. Զբոսաշրջության ոլորտին ուղղվող ֆինանսական հատկացումները և ծրագրերը անուղղակի՝ այլ ոլորտների միջնորդավորված տարբերակից բացի, ունենալ նաև ուղղակի տարբերակ, որով նաև առանձնահատուկ կընդգծվի դրա կարևոր դերն ու նշանակությունը համայնքի զարգացման համար:
4. Մշակել հաղորդակցության իրատեսական քաղաքականություն և կիրառելի զբոսաշրջային ռազմավարություն համայնքի ունեցած հնարավորությունները հասարակական լայն շրջանակներին ավելի արդյունավետ ներկայացնելու համար, համագործակցելով նաև տեղական ու միջազգային ԶԼՄ-ների հետ:
5. Համայնքում զբոսաշրջության զարգացման ուղղությամբ սպասարկման և զբոսաշրջային ոլորտի այլ շահագրգիռ կողմերին և ներկայացուցիչներին, ոլորտի զարգացման լիազոր մարմնի ներկայացուցիչներին ներգրավել ոլորտի կարիքներին ու լուծումներին ուղղված երկխոսության ու քննարկումների գործընթացում, ինչը կբարձրացնի մշակվող ռազմավարությունների և ծրագրերի հասանելիությունը և արդյունավետությունը:
6. Համապետական նշանակություն ունեցող տոների ընթացքում գործընկերների ներգրավմամբ կազմակերպել մեծածավալ տոնակատարություններ, որոնք դարձնելով ամենամյա՝ համայնքի համար կապահովվի զբոսաշրջային մեծ հոսք:
7. Պլանավորել և իրականացնել զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի հետ որոշակի պարբերականությամբ հանդիպում-քննարկումներ ոլորտի զարգացման հեռանկարների, ուղղությունների, մարտահրավերների, նոր գաղափարների, միասնական ծրագրերի իրականացման վերաբերյալ:
8. Նախաձեռնել զբոսաշրջության ոլորտի աշխատակիցների՝ գիդեր, թանգարանային աշխատողներ, ծառայության ոլորտի աշխատակիցներ, մասնագիտական և լեզվական կարողությունների զարգացման դասընթացներ, մասնավորապես օտար լեզվով հաղորդակցման համար:

Սկզբնաղբյուրներ.

1. Արմավիրի մարզի 2017-2025 թվականների ռազմավարություն
2. Էջմիածին քաղաքային համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիր
3. Էջմիածին քաղաքի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագիր
4. Էջմիածնի համայնքապետարանի 2019 թվականի տարեկան հաշվետվություն
5. Էջմիածնի համայնքապետարանի 2020 թվականի տարեկան հաշվետվություն
6. Էջմիածնի համայնքապետարանի 2021 թվականի տարեկան հաշվետվություն
7. Էջմիածնի համայնքապետարանի 2022 թվականի տարեկան հաշվետվություն
8. Համայնքի բյուջեի 2021 թվականի տարեկան բյուջեի կատարման հաշվետվություն
9. Համայնքի բյուջեի 2022 թվականի տարեկան բյուջեի կատարման հաշվետվություն

Էլեկտրոնային սկզբնաղբյուրներ

1. https://ejmiatsin.am/
2. https://www.facebook.com/MUNICIPALITY.EJMIATSIN
3. Official Website of the Municipality of Ejmiatsin

Հավելած 1.

ՀԱՐՑԵՐ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

1. Ո՞ր թանգարանն եք ներկայացնում: Այն համայնքապատկա՞ն է: Եթե ոչ, ապա ո՞ր կառույցն է ներկայացնում:
2. Ստացե՞լ կամ ստանու՞մ է արդյոք թանգարանը համայնքային իշխանություններից ֆինանսական/նյութատեխնիկական աջակցություն: Եթե այո՝ ինչպիսի՞/ինչ՞ նպատակով է տրվում աջակցությունը և ինչի՞ն է այն ուղղված:
3. Արդյո՞ք ձեր թանգարանը մասնակցում է համայնքի մշակութային կյանքի կազմակերպմանը: Եթե այո՝ նկարագրեք այդ մասնակցությունը:
4. Ստանու՞մ է արդյոք ձեր թանգարանը հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների կամ բարերար անհատների աջակցությունը: Եթե այո՝ նշեք դրանք:
5. Ըստ Ձեզ, ի՞նչ կարող է անել թանգարանը՝ իր գործունեության շրջանակներում ավելի մեծ թվով այցելուների ներգրավելու ուղղությամբ:
6. Նյութատեխնիկական կամ այլ ի՞նչ խնդիրներ ունի թանգարանը:

Հավելված 2.

ՀԱՐՑԵՐ ՏՈՒՐԻԶՄԻ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ՝ հյուրանոց/տուրիստական կազմակերպություն

1. Ո՞ր կազմակերպությունն եք ներկայացնում:
2. Միջինում քանի՞ շահառու է ունենում կազմակերպությունը տարվա կտրվածքով՝ Վաղարշապատ համայնքում իրականացվող ծրագրերի և միջոցառումների ընթացքում:
3. Կա՞ն արդյոք հաջողված համագործակցություններ համայնքային իշխանությունների հետ (համայնքապատկան տարածքների տրամադրում, իրազեկման ակցիաների խթանում և այլն):
4. Արդյո՞ք բախվել եք խնդիրների՝ Վաղարշապատ համայնքում գործունեություն ծավալելու ընթացքում: Փորձե՞լ եք լուծել դրանք, թե՞ ոչ:
5. Ի՞նչ առաջարկներ ունի կազմակերպությունը համայնքում տուրիզմը զարգացնելու ուղղությամբ:

Հավելած 3.

ՀԱՐՑԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

1. Ի՞նչ միջոցառումներ է ձեռնարկում համայնքապետարանը համայնքի տուրիստական ոլորտի զարգացման ուղղությամբ (թվարկել ըստ ոլորտների՝ հյուրանոց, տուրիստական կազմակերպություններ, թանգարաններ...)
2. Ինչպիսի՞ դինամիկա ունի համայնքապետարանը վերջին տարիներին համայնքում տուրիզմի զարգացման վերաբերյալ (աճ, անկում, նոր համագործակցություններ, հուշագրեր)
3. Արդյո՞ք համայնքապետարանը ունի/մշակում է տուրիզմի զարգացման ուղղությամբ որևէ փաստաթուղթ (քաղաքականություն, ռազմավարություն...): Եթե առկա է, խնդրում ենք տրամադրել համապատասխան օրինակը: Եթե ոչ՝ խնդրում ենք ներկայացնել՝ ո՞ր փուլում է, ի՞նչ արդյունքներ կան:
4. Արդյո՞ք համայնքապետարանը կազմակերպում է հանդիպումներ տուրիզմի սեկտորի ներկայացուցիչների հետ: Եթե այո՝ ինչպիսի՞, ի՞նչ պարբերականությամբ, ինչպիսի՞ քննարկումներ են ծավալվում:
5. Ի՞նչ է նախատեսում մոտ ապագայում իրականացնել համայնքապետարանը համայնքում տուրիզմի զարգացման ուղղությամբ:
6. Ըստ Ձեզ՝ ի՞նչ կարող է անել թանգարանը՝ իր գործունեության շրջանակներում ավելի մեծ թվով այցելուների ներգրավելու ուղղությամբ /նյութական և ոչ նյութական աջակցությունից հետաքրքրվել՝ ոչ միայն ֆինանսներ, այլև համագործակցության հնարավորություններ, տեղեկատվական հարթակներ, աջակցություն մշակութային միջոցառումների կազմակերպմանը և այլն/: